

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մարտի 24-ից 27-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

1) Ֆելիքս Մելքոնյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ,

2) Տիգրան Պալյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ,

3) Սամվել Ղազարյան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության Պարզեցված մաքսային գործառնությունների սպասարկման բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2025 թվականի մարտի 24-ից 27-ը

3. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2025 թվականի մարտի 25-ից 26-ը կայացել է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային կարգավորման խորհրդատվական կոմիտեին կից՝ լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի հերթական 50-րդ նիստը: Նիստի անցկացման նպատակն էր լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող առանձին պարզեցված ընթացակարգերի սահմանման, գործող ընթացակարգերի կատարելագործման, իրավակիրարկման պրակտիկայում ծագած հարցերի, լիազորված տնտեսական օպերատորներին ներկայացվող պահանջների մասով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի վերջնական տարբերակի քննարկումը:

5. Քննարկված թեմաները՝

Լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի նիստի օրակարգում ընդգրկված և քննարկված թեմաներն են՝

1) առանց ներմուծման մաքսատուրքերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովման տրամադրման՝ ներմուծման մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարմանն առնչվող՝ լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի տեքստը (առաջարկը ներկայացրել է հայկական կողմը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն)։

2) «Արտահանում» մաքսային ընթացակարգի շրջանակներում նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման հնարավորության տրամադրմանը

և ապրանքների հայտարարագրի ներկայացման ժամկետի երկարաձգմանն առնչվող՝ լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի տեքստը.

3) լիազորված տնտեսական օպերատորների հաշվետվությունների չտրամադրմանն առնչվող (Լիազորված տնտեսական օպերատորի հաշվառման համակարգում նշումների միջոցով և միայն մաքսային մարմնի պահանջով այդպիսի հաշվետվության տրամադրում)՝ լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի տեքստը.

4) լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեսուրսում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի՝ առկա չհամաձայնեցված հարցերը և նախագծի վերջնական տեքստը.

5) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ձևավորված՝ իրավակիրարկման պրակտիկային առնչվող հարցեր՝ նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման դիմումի հիման վրա բացթողնման չեղարկման դեպքում դիմումների մեջ նշումների կատարման կարգը.

6) այլ ընթացիկ հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ինչի հիման վրա մշակվել են համապատասխան կարգավորումներ:

Աշխատանքային խմբի՝

1) առաջին հարցի շրջանակներում քննարկվել են առանց ներմուծման մաքսատուրքերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովման տրամադրման՝ ներմուծման մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարմանն առնչվող՝ լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորումները: Պարզեցված ընթացակարգի սահմանման արդյունքում հնարավորություն կտրվի լիազորված տնտեսական օպերատորներին՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում հետաձգել ներմուծման մաքսատուրքի վճարումը կամ տարաժամկետ կարգով իրականացնել վճարումը՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման գծով պարտավորությունների կատարման լրացուցիչ ապահովման տրամադրման.

2) երկրորդ հարցի շրջանակներում քննարկվել են «Արտահանում» մաքսային ընթացակարգի շրջանակներում նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման հնարավորության տրամադրմանն առնչվող պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորումները: Պարզեցված ընթացակարգի սահմանման արդյունքում հնարավորություն կտրվի արտահանում իրականացնող լիազորված տնտեսական օպերատորներին՝ արտահանումն իրականացնել

դիմումի հիման վրա՝ հետագայում ապրանքների հայտարարագրի ներկայացման պայմանով: Արդյունքում կհետաձգվեն նաև արտահանման մաքսատուրքերի վճարման ժամկետները:

3) երրորդ հարցի շրջանակներում քննարկվել են լիազորված տնտեսական օպերատորների հաշվետվությունների չտրամադրմանն առնչվող՝ պարզեցված ընթացակարգը սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորումները: Պարզեցված ընթացակարգի սահմանմամբ հնարավորություն կտրվի լիազորված տնտեսական օպերատորներին, ապրանքների հաշվառման համակարգի առկայության և սահմանված պահանջներին համապատասխանության պարագայում, լրացուցիչ հաշվետվություն չտրամադրել մաքսային մարմիններին:

4) չորրորդ հարցի շրջանակներում քննարկվել են լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշման նախագծի՝ առկա չհամաձայնեցված կարգավորումները, ինչպես նաև նախագծի վերջնական տեքստը: Շրջանակային պահանջների առկայությամբ հնարավորություն կընձեռվի լիազորված տնտեսական օպերատորներին նոր՝ միջազգային ստանդարտներին համահունչ պարզեցված ընթացակարգերի կիրառման համար, որոնց քննարկումը նախատեսվում է աշխատանքային խմբի հաջորդ նիստերի ընթացքում:

5) հինգերորդ հարցի շրջանակներում քննարկվել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ձևավորված՝ իրավակիրարկման պրակտիկային առնչվող հարցեր: Մասնավորապես, նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողնման դիմումի հիման վրա ապրանքների բացթողումից հետո, հետագայում բացթողնման չեղարկման դեպքում դիմումի մեջ չեղարկման նշումների կատարման հնարավորություն առկա չէ: Ապրանքների բացթողման չեղարկման դեպքում առաջարկվել է քննարկել նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումի լրացման կարգում՝ մաքսային մարմինների կողմից նշումների կատարման մասով համապատասխան լրացումների իրականացման նպատակահարմարությունը:

6) այլ հարցերի շրջանակներում նախատեսված էր Ղազախստանի Հանրապետության կողմից ներկայացված առաջարկի քննարկումը: Մասնավորապես, առաջարկվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում կատարել փոփոխություններ, համաձայն որոնց՝ ազատ տնտեսական գոտիներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար ներկայումս սահմանված՝ 3 տարվա ընթացքում գործունեության իրականացման պահանջը կփոխարինվի 1 տարվա ընթացքում համապատասխան գործունեության իրականացման պահանջով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներով՝

1) առաջին հարցի շրջանակներում չորս պետությունների կողմից համաձայնեցվել է նախագծի առաջին մասը: Նախագծի երկրորդ մասի առնչությամբ առաջարկվել է կողմերին՝ ներկայացնել պետությունների համաձայնեցված դիրքորոշումները:

2) երկրորդ հարցի շրջանակներում առաջարկվել է Ռուսաստանի Դաշնությանը՝ իրականացնել հարցի ներպետական քննարկումներ և դրա արդյունքներով ներկայացնել փոխհամաձայնեցված դիրքորոշում (առկա է տարաձայնություն պետական մարմինների և գործարար համայնքի դիրքորոշումների միջև)՝


3) երրորդ և չորրորդ հարցերի շրջանակներում համաձայնեցվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծերի հիմնական մասը, որոշ հարցերի մասով առաջարկվել է ևս մեկ անգամ քննարկել և ներկայացնել դիրքորոշումներ.

4) հինգերորդ հարցի շրջանակներում փոխանակվել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ձևավորված իրավակիրարկման պրակտիկային առնչվող տեղեկությունները: Առաջարկվել է քննարկել մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումի լրացման կարգում լրացումների իրականացման նպատակահարմարությունը.


5) վեցերորդ հարցի մասով Ղազախստանի Հանրապետության ներկայացուցիչներին առաջարկվել է ներկայացնել առաջարկի մասով համապատասխան հիմնավորումներ՝ դիրքորոշումներ ձևավորելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը


Ֆելիքս Մելքոնյան



Տիգրան Պալյան



Սամվել Ղազարյան



31.03.2025թ.